**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի**

**«14» հունվարի 2019թ. թիվ 134 նիստում**

**_____ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) կառավարման և վարչարարության գործընթացներն իրականացվում են որակի կառավարման սկզբունքով («պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում» - ՊԻԳԲ շրջափուլով):

Կենտրոնի կառավարման և վարչարարության քաղաքականության կազմակերպման և իրականացման հիմքում ընկած է կրթության որակի ապահովման քաղաքականությունը:

Կենտրոնում պարբերաբար ուսումնասիրվում և գնահատվում են կազմակերպական կառուցվածքը, վերլուծության ենթարկվում կազմակերպական կառուցվածքում պատասխանատվության տարանջատման և ֆորմալիզացման մակարդակը, պատասխանատվության և լիազորությունների համապատասխանությունը, լիրազորությունների պատվիրակման մակարդակը, կառուցվածքային օղակներում

պատասխանատվության բաշխման համաչափությունը, կառուցվածքային ստարաբաժանումների համագործակցությունը, ներքին ընթացակարգերի առկայությունը:

## ՆՊԱՏԱԿ

Սույն քաղաքականության նպատակն է կազմակերպել և իրականացնել Կենտրոնի կառավարման և վարչարարության մոտեցումներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով որակի կառավարման ողջ կենսափուլը:

## ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Կենտրոնի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան է, որը ստեղծվել և գործում է ՀՀ ԳԱԱ մասին օրենքով սահմանված կարգով:

Կենտրոնի գիտական խորհուրդը ձևավորվում է Կենտրոնի կանոնադրության համաձայն՝ որպես ուսումնամեթոդական, գիտական և գիտատեխնիկական, տնտեսական գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին: Կենտրոնի գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը (նախագահ), նրա տեղակալը, գիտական քարտուղարը, ուսումնական մասի պետը, դեկանը, ուսանողական խորհրդի նախագահը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահության և Կենտրոնի տնօրենի առաջարկությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, առանձին դասախոսներ ու գիտաշխատողներ, ԳԱԱ համակարգի առաջատար մասնագետներ և այլն: Գիտական խորհրդի կազմը և անդամների թիվը, տնօրենի առաջարկով, հաստատում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը:

Կենտրոնի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Կենտրոնի տնօրենը: Կենտրոնի տնօրենությունը տնօրենին կից գործող խորհրդակցական մարմին է, որի կազմում ընդգրկվում են տնօրենը, տեղակալները, գիտական քարտուղարը, ուսումնական մասի պետը, դեկանը, բաժինների ղեկավարները, ամբիոնի վարիչներ:

## ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնում բոլոր գործընթացները կազմակերպվում են որակի կառավարման սկզբունքով:

**Պլանավորում**

Կենտրոնում պլանավորման գործընթացն իրականացվում է հետևյալ մակարդակներում՝

- ռազմավարական պլանավորում (երկարատև),

- մարտավարական պլանավորում (կարճատև՝ մինչև մեկ տարի),

- օպերատիվ պլանավորում,

- պլանավորում ըստ գործողությունների (ֆինանսական, ինովացիոն և այլն):

**Իրականացում**

Կենտրոնի կողմից պլանավորված գործընթացները և գործողությունները ենթակա են իրականացման Կենտրոնի զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան՝ ըստ սահմանված պատասխանատուների և ժամկետների (հաստատված գործողությունների պլան-ժամանակացույցին համապատասխան):

**Վերահսկում**

Կենտրոնի կողմից իրականացվող գործընթացների կատարման վերահսկողության համար պատասխանատու են կրթության որակի վերահսկման հանձնախումբը և տնօրենի հրամանով հաստատված աշխատանքային այլ խմբեր: Վերահսկողությունն իրականացվում է մշտադիտարկման կամ ներքին աուդիտների միջոցով:

**Վերանայում**

Տվյալ փուլում իրականացվում է առկա պլանների և ծրագրերի վերանայում՝ կառավարման և վարչարարության տարբեր մակարդակներում: Վերանայման համար հիմք են

հանդիսանում վերահսկողության արդյունքները և աշխատանքային խմբերի կողմից ներկայացված հաշվետվություններն ու առաջարկությունները:

**Բարելավում**

Կառավարման և վարչարարության գործընթացների բարելավման նպատակով վեր են հանվում տվյալ ոլորտում առկա ուժեղ ու թույլ կողմերը և մարտահրավերները: Կառավարման տարբեր մակարդակների վրա կայացվում են որոշումներ այս կամ այն կառավարման գործընթացի բարելավման ուղղությամբ, կազմվում են բարելավմանն ուղղված միջոցառումների պլաններ:

**Քաղաքականության իրականացում**

Կառավարման մեթոդների և մոտեցումների մշակումն ու ներդրումը պետք է երաշխավորի Կենտրոնի կառավարման համակարգի արդյունավետ աշխատանքը:

**Իրավասություններ և պատասխանատվություն**

Սույն քաղաքականության ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

- տնօրենը,

- փոխտնօրենը,

- կրթության որակի ապահովման հանձնաժողովի ղեկավարը,

-կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները,

- ամբիոնների վարիչները և  որակի գծով ամբիոնային պատասխանատուները, որոնք առնչություն ունեն կառավարման և վարչարարության գործընթացների և դրանց որակի ապահովման հետ:

**Քաղաքականության վերանայում**

Քաղաքականությունը ենթակա է փոփոխման կամ վերանայման ըստ սահմանված ընթացակարգերի: Այն պարտադիր վերանայվում է Կենտրոնի զարգացման ռազմավարական պլանի վերանայմանը զուգընթաց: Անհրաժեշտության պարագայում վերանայվում է Կենտրոնի կառուցվածքը՝ գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

## ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

## ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Սույն ընթացակարգով սահմանվում են Կենտրոնի կառավարման և վարչարարության պահանջները, նկարագրում են կառավարման և վարչարարության գործընթացները՝ պահպանելով որակի կառավարման սկզբունքները (ՊԻԳԲ): Սույն ընթացակարգի կազմակերպման և իրականացման համար պատասխանատու են Կենտրոնի կառավարման մարմինները և այն անձինք կամ աշխատանքային խմբերը, որոնք առնչություն ունեն կառավարման և վարչարարության գործընթացների հետ:

Սույն ընթացակարգը մշակված է՝ ըստ Կենտրոնի կառավարման և վարչարարության քաղաքականության և այլ նորմատիվային փաստաթղթերի: Կենտրոնի կառավարման գործընթացներն իրականացվում են ուղղահայաց և հորիզոնական սկզբունքներով՝ հաշվի առնելով կառավարման մակարդակները: Կենտրոնի կառավարումն իրականացնող հիմնական օղակներն են՝

- ՀՀ ԳԱԱ և նախագահություն,

- Կենտրոնի գիտական խորհուրդ,

- Կենտրոնի տնօրենություն:

Կենտրոնի կառավարումն ու վարչարարությունն իրականացվում է կառավարման հետևյալ սկզբունքով. գործընթացների պլանավորում, իրականացում, գնահատում տարբեր մեթոդներով և մեխանիզմներով, գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

## ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Սույն ընթացակարգի **նպատակն է** հստակ սահմանել Կենտրոնում իրականացվող կառավարման գործընթացները, դրանց իրականացման սկզբունքներն ու մեխանիզմները: **Խնդիրները՝**

- սահմանել Կենտրոնի կառավարման կառուցվածքը,

- կառավարման սկզբունքներին համապատասխան նկարագրել կառավարման գործընթացները,

- սահմանել կառավարման և վարչարարության իրականացման մեխանիզմները,

- սահմանել պատասխանատուներին՝ ըստ կառավարման մակարդակի և իրականացվող գործընթացի:

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնի կառավարման կառուցվածքը սահմանվում է տնօրենության կողմից, ապա քննարկվում կառավարման վերին մակարդակում՝ Գիտական խորհրդում, և հաստատվում: Սահմանվում են կառավարման մարմինների գործառույթները՝ Կենտրոնի կանոնադրությանը համապատասխան:

Կենտրոնի որակի կառավարման համակարգի շրջանակներում իրականացվում են հետևյալ գործընթացները՝

**Պլանավորում կառավարման տարբեր մակարդակներում**.

- ռազմավարական պլանավորում,

- տակտիկական պլանավորում,
- օպերատիվ պլանավորում,
- պլանավորում ըստ գործողությունների (ֆինանսական, ինովացիոն և այլն):

Կենտրոնում կազմակերպվող և իրականացվող գործընթացների համար **նորմատիվային հենքի ստեղծում** և կատարելագործում:

**Գործընթացների իրականացում** ըստ սահմանված ներքին և արտաքին նորմատիվային փաստաթղթերի, հրամանների և հանձնարարականների:

**Կրթության և կրթական գործընթացների որակի գնահատում** մշտադիտարկումների և աուդիտների (ներքին և արտաքին) միջոցով:

**Կառավարման և վարչարարության գործընթացների իրականացման թափանցիկության ապահովում** (հաշվետվողականության և շահակիցների հետ հետադարձ կապի ապահովում):

**Կրթական գործունեության և կրթության որակի բարելավմանն** ուղղված միջոցառումների կազմակերպում կառավարման տարբեր մակարդակներում:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Կենտրոնի կառավարման որակի ապահովման մեխանիզմներն են՝

- **Կենտրոնի ղեկավար կազմի առաջնորդություն:** Ղեկավար կազմի կողմից վերին օղակի մարմինների և կառույցների գործունեության վերահսկողության իրականացում:

- **Որակի պլանավորում, վերահսկում և բարելավում:** Կենտրոնի կառավարման գործունեության գնահատման մեխանիզմներ՝ մասնավորապես գործընթացների մշտադիտարկում և աուդիտներ (ներքին և արտաքին):

- **Կենտրոնի գործունեության որակի վերաբերյալ վիճակագրության հավաքագրում, մշակում և վերլուծություն:**

**- Կառավարման գործընթացների գնահատում:**

**- Կենտրոնացում շահակիցների կարիքների վրա:** Կենտրոնի գործունեության գնահատում հիմնական շահակիցների (ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ), ինչպես նաև արտաքին փորձագետների կողմից:

**- Կենտրոնի կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում:** Կրթական բարեփոխումների շրջանակներում Կենտրոնի կազմակերպական կառուցվածքի վերանայում և բարելավում: Կենտրոնի որակի կառավարման համակարգի որակի ապահովման մեխանիզմների կիրառման սպասվելիք արդյունքները՝

- Կենտրոնի գրավչության բարձրացում,

- կրթական ծառայությունների որակի նկատմամբ պահանջների իրականացում,

- Կենտրոնի տարբեր տեսակի շահակից կողմերի բավարարվածության բարձրացում և այլն:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Կենտրոնի կառավարման գործընթացների պլանավորման, կազմակերպման և իրականացման համար պատասխանատու են՝**

- տնօրենը՝ որպես Կենտրոնի ռազմավարական պլանավորման գործընթացի ղեկավար,
- փոխտնօրենը, ուսմասի պետը, դեկանն ու գիտքարտուղարը՝ որպես Կենտրոնի գործունեության պլանավորման և իրականացման (ըստ ռազմավարական գերակա ուղղությունների) գործընթացի կառավարիչներ,
- կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ Կենտրոնի որակի գործընթացների կամ գործողությունների կազմակերպման և իրականացման համար պատասխանատուները:

**Կենտրոնի կառավարման գործընթացների որակի ապահովման համար պատասխանատու են՝**

- Կենտրոնի կրթական գործունեության ներքին վերահսկում՝ Կենտրոնի կրթության որակի ապահովման հանձնաժողովը,

- Կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վերահսկում՝ Կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների կրթության որակի ապահովման պատասխանատուները,
- ֆինանսական գործունեություն՝ ֆինանսական բաժինը, իսկ անհրաժեշտության պարագայում՝ արտաքին աուդիտորը,
- Կենտրոնի գործունեության կատարողականի ստուգման համար ստեղծվող աշխատանքային խմբերը,
- ենթակառուցվածքային և ծրագրային աուդիտ կամ հավատարմագրում՝ արտաքին փորձագետները: